ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ Ա. ՓԵԼԵՇՅԱՆԻՆ

Լոռու մարզ, ք. Վանաձոր 3 փետրվարի 2025թ.

Թեմա. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության աուդիտ:

Հարգելի պարոն Փելեշյան

Համաձայն մեր կողմից իրականացված աուդիտի, Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության աուդիտորական եզրակացությունը՝ հայերեն լեզվով, երկու օրինակից:

Շնորհակալ ենք Ձեզ և Ձեր անձնակազմին լավ վերաբերմունք ցուցաբերելու համար:

Հարգանքով՝

Տնօրեն՝ Դ. Հարությունյան

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Փաստաթուղթը ազմված է երկու բաժիններից.

1. Աուդիտորական եզրակացություն
2. Նամակ ղեկավարությանը

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ղեկավարին և ավագանուն.

Եզրակացություն ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2024 թվականի բյոուջեի կատարման տարեկան հաշվետվության աուդիտի վերաբերյալ

Կարծիք

Աուդիտի ենք ենթարկել ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի (այսուհետ՝ Համայնք) 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը կազմվել է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջներին և ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանի հավելված 2-ով սահմանված «Հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին» հրահանգի IV ենթաբաժնի Համայնքի բյուջեի կատարման մասին հաշվետվության կազմման, ներկայացման և ամփոփման առանձնահատկություններին համապատասխան, իսկ Համայնքի 2024 թվականի բյուջեի (այսուհետ՝ Բյուջե) կատարումն իրականացվել է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով սահմանված պահանջներին համապատասխան, որը տալիս է եկամուտների և ծախսերի ճշտության և նպատակային օգտագործման վերաբերյալ ճշմարիտ պատկեր:

Համայնքի ղեկավարի պատասխանատվությունը Բյուջեի կատարման համար.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 1-ին կետի 1-ին ենթակետի՝ Համայնքի ղեկավարը ապահովում է Բյուջեի կատարումը, իսկ համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ կետի՝ Համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն Համայնքի ղեկավարն (այսուհետ՝ Ղեկավար) է:

Աուդիտորի պատասխանատվությունը.

Աուդիտորի նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ է էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է:

Աուդիտի ողջ ընթացքում կիրառվել է մասնագիտական դատողություն և պահպանվել է մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշվել և գնահատվել է խարդախության կամ սխալի հետևանքով Համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը.
- նախագծվել և իրականացվել է աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք է բերվել աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար հիմք են հանդիսացել աուդիտորական եզրակացության համար.
- ձեռք է բերվել աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ աուդիտորական ընթացակարգեր նախագծելու նպատակով.

- ելնելով Համայնքի 2024 թվականի բյուջեով նախատեսված միջոցների ծավալով լավագույն արդյունքի հասնելու անհրաժեշտությունից, ստուգվել է բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունը և դրա համապատասխանությունը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներին.
- ելնելով բյուջետային միջոցների հասցեգրվածության և նպատակայնության սկզբունքից, ստուգվել է նաև բյուջետային միջոցների հատկացումները կոնկրետ ստացողներին՝ ֆինանսավորման հստակ նպատակների նշվածությամբ.
- ստուգվել են փաստացի ծախսերը, համոզվելու համար, որ բյուջետային միջոցները չեն ծախսվել այլ ուղղություններով կամ այլ նպատակներով.
- գնահատվել է Համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության արժանահավատությունը, կառուցվածքը, բովանդակությունը և դրա համապատասխանությունը ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի ՀՀ մարտի 13-ի N 254-Ն հրամանով սահմանված հավելված 2-ի IV ենթաբաժնի պահանջներին, ինչպես նաև գնահատվել է, արդյո՞ք Համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ներկայացնում է դրանց հիմքում ընկած գործարքները և իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է վերջինիս ճշմարիտ ներկայացումը:

Համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվության առանձնահատկությունները.

Համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակահատվածում համայնքի բյուջեի կատարման մասին թվային և վերլուծական տեղեկատվություն:

1. Համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվության վերլուծական մասը ներառել է՝

1) հաշվետու ժամանակաշրջանի համար Համայնքի բյուջեի եկամուտների վերլուծությունը, որտեղ ներկայացվել է բյուջեով նախատեսված յուրաքանչյուր եկամտատեսակի գծով համապատասխան ցուցանիշների վերլուծությունը.

2) հաշվետու ժամանակաշրջանի համար Համայնքի բյուջեի ծախսերի վերլուծությունը, որտեղ ներկայացվել է ծախսերի գծով համապատասխան ցուցանիշների վերլուծությունը՝ ըստ դրանց տնտեսագիտական և գործառական դասակարգման համապատասխան տարրերի,

3) տեղեկություններ հաշվետու ժամանակահատվածում Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով,

4) տեղեկություններ՝ հաշվետու ժամանակահատվածում բյուջեի պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ:

2. Հաշվետվության թվային մասը կազմվել է Համայնքի 2024 թվականի բյուջեի հավելվածներին համապատասխան:

3. Համայնքի 2024 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի վերաբերյալ հաշվետվությունը թվային մասում ներկայացվել է առանձին տեղեկանքով:

Աուդիտի ընթացքում պարզվեց, որ.

- բոլոր էական առումներով բյուջետային միջոցներն օգտագործվել են արդյունավետ և համապատասխանել են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներին.

- պահպանվել է բյուջետային միջոցների հասցեագրվածության և նպատակայնության սկզբունքը, բյուջետային միջոցները հատկացվել են կոնկրետ ստացողներին՝ ֆինանսավորման հստակ նպատակների նշվածությամբ.
- պահպանվել է Բյուջեի մուտքերի և ելքերի արտացոլման լրիվության սկզբունքը՝ մուտքերը և ելքերը ամբողջ ծավալով արտացոլվել են Բյուջեում.
- պահպանվել է Բյուջեի հաշվեկշռվածության սկզբունքը.
- ծախսերը կատարվել են Բյուջեով նախատեսված ծախսերի ուղղություններին համապատասխան:

Հիմք ընդունելով Համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությամբ արտացոլված ցուցանիշների վերլուծությունը, կատարված գործարքների փաստաթղթային ուսումնասիրությունների արդյունքները, կարող ենք փաստել, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են մեր կարծիքը արտահայտելու համար:

Մեր կարծիքով Համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը կազմված է ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N254-Ն հրամանով հաստատված հավելված 1-ի Ձև 9-ին համապատասխան և բոլոր էական առումներով տալիս է ճշմարիտ պատկեր Բյուջեի, ինչպես եկամուտների, այնպես էլ դրամարկղային և փաստացի ծախսերի կատարման վերաբերյալ: